

ՊՏՈՒՂՆԵՐ


Կարգ մը ծառերու պտուղները շատ համեղ եւ սննդարար ուտելիքներ են:



խնձոր



նարինջ



տանձ



ծիրան



թուզ



կեռաս



պանան



խաղող



ճմերուկ

Հասուն պտուղներու մէջ կը գտնուին օգտակար հիւթեր, որոնք կենսանիւթ կը կոչուին: Խակ պտուղը վնասակար է:

Պտուղները կ'ունենան մէկ կամ բազմաթիւ կուտեր: Կիսէ նարինջ մը եւ դեղձ մը:



Քանի՞ կուտ կը գտնենք նարինջին մէջ, դեղձին մէջ

Տո՛ւր անունը հինգ պտուղներու, որոնք բազմաթիւ կուտեր ունին:

Տո՛ւր անունը երեք պտուղներու, որոնք մէկ կուտ ունին:

Ներկէ՛ խաղողի ողկոյզը:
Գիտե՞ս, ի՛նչ կը կոչուի խաղողին տունկը:



Ներկէ՛ յարմար գոյներով եւ գրէ պտուղին
անունը:

